

ՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ԶԵՆՈՍԳԻՐՔ

ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԱՌԻԱՊԱՏԻՆԻՆ
ԱՄԻՐՏՈՒՎԱԹԱՅ

Ամասիացի անուանի բժիշկ Ամիրտու-
վաթին սոյն աշխատութեան մասին ա-
ռաջին անգամ գրած եմ 1889ին, երբ
Բարիգի Bibliothèque nationale մէջ
գտնուած Հայ բժշկական Զեռագիրներու
վրայ ուսումնասիրութիւն մը կը հրատա-
րակէի¹։ Ինձմէ յետոյ բարեյիշատակ Հ.
Ղևոնդ Վ. Յովնանեան ալ գրեց՝ անոր
լեզուին ու ոճին և ռամբօրէն աստիճան-
ներուն մասին սքանչելի ուսումնասիրու-
թիւն մ'ընելով²։ Այսօր կրկին անգամ
այս գործին անդրադառնալովս, նպատակս
զայն իբր նորութիւն դարձնալ ծանոթացը-
նել չէ, այլ մոռացութենէ կորզել ամ-
բողջը, որ մէկ հատիկ օրինակն է սեպ-
հական Բարիգի Bibliothèque nationa-
leի։

1889էն ի վեր՝ հակառակ պըպտում-
ներուս, բազմ չունեցայ ատոր մէկ ուրիշ
օրինակին հանդիպելու։ Միայն վերջնրս
անձի մը քով տեսայ ձեռագիր մը որ այդ
Յատնաշարանութիւնը կը պարունակէր, սա-
կայն այնչափ պակասաւոր և աղճատ, որ
բուն գործին քառորդն իսկ չէր կազմեր։
Ախրապատիւի Յառաջարանութիւնը,
ինչպէս վերջը գտնուած Յիշատակարանէն
կ'իմացուի, գրած է Ամիրտուվաթի կ. Պու-
սոյ մէջ Հայոց Զ. և Քրիստոսի 1451
թուին։ Կը պարունակէ մանրամասն տե-
ղեկութիւն բուն Ախրապատիւին վրայ (Դե-
ղաբանութիւն) որ ընդարձակ աշխատու-
թիւն մ'է և որ՝ Հեղինակին « Օգոստ
բժշկութեան », « Անգիտաց Անպետ » լայնա-
ձակ երկասիրութիւններուն հետ եռոտա-
նի մեծ կոթող մը կը յօրինէ ժեռ՝ դարու
Հայ բժշկական պատմութեան։

Ամիրտուվաթի ուրիշ գործերէն քա-

ղուածներ և ուրիշ գրուածներ պարու-
նակող և 247 թուահամարը կրող ձեռա-
գիր հատորին մէջ կը գտնուի այն՝ և է հե-
տեալը։

ՎԱՍՆ ԹԷ ԷՐ ԵՂԵԻ ԱՌԻԱՊԱՏԻՆԻ,
ԵՒ ԲԱԶՈՒՄ ԽՐԱՏՔ
ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԱՌԻԱՊԱՏԻՆԻՆ

« Խօսք բժշկապետաց թէ յէր եղև աղբապա-
տինն։

Յառաջ յիշենք զերկու ազգ փորձողներն, որ
է՝ Թաճրիպային տէրքն, և յետոյ յիշենք զկար-
ծողքն, որ է՝ դիասին տէրքն։ Եւ այնոց որ
փորձողք էին ի բժշկապետացն, առ. զեղերով
կու գործէին, և յետոյ գրեցին խառնուած դե-
ղեր, որ այն բժշկապետքն իւրեանց բառով
հին բժշկարան ասեն, և բաքարառ կու բռնէր
և այս ստէ։ որ զայս դեղերն յերազն տե-
սաւ, և ոմանք միաբանեցան և փորձելով գտան
զօգտութիւն։ Եւ խառնուած դեղերն այն դե-
ղերն է՝ որ բժշկապետքն ի մէկ մէկ դեղերուն՝
յիրար խառնեն և շինեն են, և զօգտութիւն փոր-
ձել են։ Եւ այս ստէ. որ մէկ քանի՝ մէկ մէկ
դեղեր՝ որ ի մէկ քանի հիւրդին փորձեն էին,
և զայն յիրար խառնեցին և շինեցին, և քանի
մի ցեղ խառնուած հիւանդութեան փորձեցին՝
և ինքն օգտեց, և եղև որ մէկ մարդոյ օգտեց,
և մէկ մարդոյ չ'օգտեց, և այլ յետոյ ի յայն
հիւրդին իյատիւնանն դեղ մի այլ գտան և
տարին՝ որ օգտեց այն բնութեան, և զայս օգ-
տակար գտան և պատուական։ Բայց կարծող-
նին հանց կարծեցին, որ յառաջն զմարդկային
բնութիւն որ մէկ մէկի հակառակ է գիտնան,
և զայս հակառակութիւնս ինչպէս է զայն այլ
գիտնան զհիւանդին, և զայն հակառակութիւն
որ ի յօտար իրաց է, զայն ալ գիտնան. և
նոյնպէս զհակառակութեան դեղերուն բնութեան
և զօրութեան, առ. զեղոց զայն ալ իմանան, և
զամէն մէկի զգործաւորութիւն այլ իմանան, և
ի յամենայն զօգվածոց զհիւանդութիւն այլ ի-
մանան. զեղ կայ՝ որ տաք է, և կայ՝ որ հով
է, և որն գէճ է, որն չոր է, և ամէն մէկին
աստիճանն յիւ տեղն պիտի յիշուի, յանց որ
ասացած է, և այս ամէնն զեղերուն ուժն, դ.
աստիճան է. հանց որ՝ օշիւդրն՝ տաք է, ա. տա-
րանան, և չոր է բ. տարանան և անիստն տաք
է՝ բ. տարանան, և չոր է գ. տարանան և ափիսնն՝
հով է, դ. տարանան, և չոր է, գ. տարանանին

1. « Արեւիկ » կ. Պուսոյ, Թիւ 1783, 4 Նոյեմ. 1889.

2. « Հնազօգտութեան Երկնային Ռամբօրէնք վրայ »
Վիեննա, Մասն Ա. Հար. Բ. էջ 387-391.

վերջն, և չորս տարածանին յառաջն, իւս և սաւ լորն՝ հով է՝ ք. տարածանին յառաջն, և գէճ է՝ ք. տարածանին վերջն: Եւ այսպիսի ձեռովս, զուժն ամենայն ղեղորցն գիտեանն. և սսէ. սահմանած, և զուժով աստիճանն կու յիշեն և զբանն կու հասկնան. և յորժամ խառնուած հիւանդութիւն տեսնուեն, և աղէկ թտալարան, և ստոյգ կարծեն խառնուած ղեղերով, զի ստացումն առնեն կաւ մօքն աստուծոյ:

Երկրորդ՝ յիշենք զայն պատճառներն՝ որ իր հասկնալն պիտեան է՝ վասն զ. պատճառի: Ա. այն է որ բնութիւնք հիւանդնուս հակառակ է. և ք. այն է՝ որ հիւնընդին զօգուածին ձեն մէկ մէկի հակառակ է. և գ. այն է՝ որ աս. ղեղերուն ուժն այլ հակառակ է մէկ մէկի: Եւ՝ զ. այն է՝ որ ղեղեր շինեն որ ի հիւանդին ստաւ ցումն շատ ի գործ կու անցնի և մահացու ղեղորցն զէն կու առնէ, և զզազանհարին զարու. թիւն կու թափանէ: Բայց զայս ղեղրանքն յիրար խառնեցին որ բնութիւնք մարդկային աս. ի՝ հակառակ են՝ և հանց հիւանդ մի կայ, որ հով է և տաք, բայց աստիճանն ղեղին կամ հիւանդին չիմացուաւ, և բնութեան հիւանդին և ղեղին՝ հաւասար չեղաւ, և եւան բժշկապետքն ղեղ միայլ խառնեցին՝ վասն հաւասար զալու հաւմար՝ հիւնընդին բնութեանն Բայց քեզ օրինակ բերեմ հանց որ իմանաւ. հանց հիւանդութիւն լինի որ զան հիւանդն տաքցնել կու պիտի, և հանց որ տաքութիւն ք. աստիճանն լինի, և ի յայն տեղն՝ յայնպահն յայն տեղն չի գտուի, բայց այլ ղեղ գտան՝ որ տաք է գ. տարածան, բայց անհարակ ղեղ մի այլ գտան՝ որ աս. տաւածան հով է, և խառնեցին՝ որ զայն ղեղին տաքութիւն սակաւ մի կտորէ և հովցնէ. և այս ք. ղեղիս բնութիւն՝ տաք լինի՝ յ. ք. աստիճանն, հանց որ ի տաք շուրս քիչ մի պաղ շուրս խառնես՝ որ եղլ լինի: Եւ օրինակ մի այլ ասեմ քեզ՝ որ շերմն կայ՝ որ տանգին ղիպղայի խաւիսայ՝ ասէ, այն պատճառին համար, որ իր քննայումն՝ յ. ք. խլտէ է, որ յիրար է խառնէր, բայց կու պիտի որ այսոր այլ ղեղն յիրար խառնի, որ օգտէ այն, ք. խլտին: Եւ այլ ասեմ քեզ օրինակ մի այլ, որ հանց ուռցէ լինի մարդոյն, որ ի յարենէ և ի սափրայէ լինի, և իր ստաւ ցումն, աս. ղեղով չկատարի: Եւ օրինակ մի այլ. ատեն մի լինի հիւանդութիւն, որպէս տաք ուռցն, և տաք զլխացաւութիւն, և տաք ներքիս. յառաջն զարմնօղ ղեղեր ի գործ արկ, և յետոյ հալող ղեղեր հետ դարցնողին խառնէ և ի վերջն զամէնն հալող ղեղեր ի բան տար: Եւ քեզ օրինակ

նակ մի այլ, որ մարդ խիտ ցաւ մի ունենայ կամ հիւանդութիւն մի՝ որ ի տաքութենէ, կամ ի հովութենէ, և կամ ի յալլ ցեղ իրաց, և իւմանաս որ՝ աս. ղեղն նորա չ'օգտէ և չի կարէ դարձնել ցաւն, նա չի պիտի որ անհարակի. քանի մի ղեղ յիրար խառնեն, և ներհակ լինի այն ցաւուն՝ և օգնէ հիւանդին բնութեան. և այս ղեղերս որ միանան՝ ուժովան և բնկերեն մէկ մէկի, և դարձնեն զհիւանդութիւն: Եւ այս ղեղերուս խառնուիլն՝ ի զօղուածոց հաշուովն այլ ի գործ կու արկանեն. հանց որ զօղուած մի լինի որ ի ստամոքնն հետու լինի, որպէս բուշտն, և երկկամն, և թոքն, իւր հետուքեան պատճառովն ղեղին ուժն ի յայն տեղն յուշ կու հասնի, բայց անհարակ. զայն ղեղերն որ այն զօղուածին համար է շինած, զայն յայն տեղն տանի ուժով, և ղեղ մի այլ որ զուժն պահէ, և այլ զօղուածքն ղեղերն զուժն լմարտէ և խաւիանի ուժն, և յայն տեղն չհասնի. բայց այն ղեղերն որ շուտով ի ցաւուն տեղն հասնի. որպէս քարօսին հունտն, և սալիխան, և անիտեն և այսոնք են ինկերող ղեղերն, և այսոնց բժշկապետքն, մուպատրազ՝ ասեն, որ թարգմանի բնկերող: Եւ այն որ զօղերուն ուժն պահէ, և այլ զօղուածքն ղեղն չիմարտէ, որպէս ափոնն, և աղուէլընկին հունդն, և ուֆարին տակին կեղն: Եւ այն զօղուածքն որ որպէս ըստաւմօքն և լերդն, և իր ստացումն հալող ղեղերով լինի, և զայն հալող ղեղերն ի կապող ղեղն խառնես՝ և առնուս. և անուշ՝ որպէս մազաւ, քէն, և սառնիլինն՝ որ յիրար խառնի որ զօղուածքն ի յուժն չի ձգէ: Եւ թէ հանց զօղուածն մի լինի որ ղեղին զօրութիւն ի յայն զօղուածքն հասնի, և քիչ մի հօն կենայ, որ այն ղեղին զօրութիւն կենալովն ներգործէ որ կատարի բանն: Եւ հանց թէ որ ինքն լերդն լինի. և ի յայս ղեղք ղեղ մի այլ կու պիտի, որ զկալուածն բանայ. և շուտ եւանէ ի լերդն, և քիչ մի ղեղ պիտի որ ղեղն ի ներհակն քաշէ, որպէս բողկին հունդն, և որ նման է սոցայ՝ խառնես յիրար որ ղեղին զօրութիւն լման ի տեղն լինի: Եւ թէ զօղուածն մի լինի՝ որ իր զգայութիւն ուժով լինի. որպէս ալքն և ստամոքբերանն, և աղիքն, և բուշտն, և զայսոնց ղեղերն ի յալլ հանց ղեղեր խառնէ՝ որ թմրեցնէ, որպէս աս. ֆիոնն՝ և որ սոցին նման է, որ սզայութիւն սոցին պակսեցնէ՝ որ ցաւն չիմանայ՝ և կամ քիչ իմանայ, և ի ցաւուն խտութենէն զօղուածն ուժն չիափանի: Եւ թէ զօղուած մի լինի որ իր միտն պինդ լինի, որպէս իրկկամն զի նա

գեղերն այնոր ստացումն ի բան տանիլ կու պիտի. որպէս զամբ, և քիթրայ, և նշայ, և հանց՝ որ յստակէ զխլտն՝ զայն խառնէ, որպէս խիարին հուշտն, որ է՝ կուտն, և ձարխտուն: Եւ հանց դեղեր որ զօգուածին ուժն պահէ, որպէս ճաղղուզան, և զաֆրանն՝ խառնուին ի մէկ մէկ, և ի մէկի մէկ խառնելն ուժովայ:

Եւ զօգուածք լինի որ մէկ մէկի հետ ընկն. բուծիւն ունի, որպէս ստամոքն և ըզգոն. և այսոնց դեղերն որ շինուի և յիրար խառնուի, հանց պիտի որ այն Բ. զօգուածին այլ օգնէ. և պիտի որ անպատճառ մեղր և չաքար խառնի ի դեղրանքն, որ համն և հոտն անուշ լինի, որ ըստամոքն չաւիրի: Եւ այլ պատճառ դեղերն յիրար խառնելուն այն է, որ մարդկաց բնուծիւն մէկ մէկի հակադաս է, և դեղեր կայ որ համն և հոտն չէ անուշ, և ստամոքն զայն դժուարութեամբ կու ընդունի, որպէս ճաւշիրն՝ բայց անճարակ պիտի որ անուշահոտ իրք մի խառնեն, որպէս մեղրն և կամ չաքար, որ համն և հոտն անուշ լինի, որ ըստամոքն չաւիրի: Եւ այլ դեղերն կայ՝ որ ըստամոքն կու խառնէ, և փսխել կու տայ, որպէս մանուշակն, և խիար. չաքարն, և անպատճառ պիտի որ իրք մի խառնեն՝ որ զըստամոքն ուժովցնէ և ամրացնէ և փսխել չտայ, և խառնէ յինքն խելլալու՝ և որ նման է սոցա: Եւ կայ շատ դեղեր որ ըստամոքն քին գէն կու առնէ՝ որպէս սորընճանն, և զամխն, և սակամոնին, և զանճիհանդան, և զսալըլհիմարն, և զանդարիոնն, և այսոնց պիտի որ հանց դեղեր խառնեն որ ստամոքին շահ առնէ, և խառնէ՝ որպէս կարմիր վարդն, և մազտաքն, և խուսկն, յօտն, պուտինան, և քամոնն, և նանխօնն, և պղպղն, և զանճապիլն, և տառ. չինին, և տարիֆլուլն և հալիլայ քապիլին, և պալիլանն, և ամլանն: Եւ նալ դեղեր կայ, որ լերդին գէն կու առնէ, որպէս՝ մու և ֆար. ֆիոնն և քացախ: Եւ այլ դեղեր կայ, որ լերդին օգնէ, որպէս ըռովանդն, զաֆրանն, և սնպուլն, և դաֆէթն, և ծորն, և քասնին, անճար պիտի և ան դեղերն որ գէն կառնէ, և այն որ շահ կու առնէ մէկի մէկ խառնէ՝ և ապա տուր: Եւ այլ դեղեր կայ, որ օգնէ սրտին, որպէս սուշկ, և զաֆրանն, և մանուշակն և սպիտակ ստանն, և սնպուլն, և յօտն, և եզնալն, և քոզու, տարտանն և նարտին և ապրիլուռն և Բ. ազգպահմանն: Եւ այլ դեղեր կայ, որ սրտին գէն կու առնէ, որպէս գնձին Բուրն, և ասպա. դօլն, լուֆանն, պազրպանն, և որ նման է սոցա: Եւ այլ կայ դեղեր՝ որ ներկամացն շահ

կու առնէ, որպէս քաքառանն, և խիարին հուշտն, և շնկիարին, և հապլֆաղթն, և որ նման է սոցա: Եւ այլ կայ դեղեր, որ օգնէ փայծղանն որպէս գերեանդն, և քապարն, և կազմագոն, և օշախն, և մանեխն, և այլ որ նման է սոցա: Եւ այլ կայ դեղեր, որ սաֆրայ լուծէ, որպէս սակամոնին, սապոն, օշինդրն, դեղին հալիլան, թմրհնդին: Եւ կայ որ սաղտայ լուծէ, որպէս աֆթիմոնն, և լազուարդ քարն, և հաճարի էր. մանին, և հնդի աղն, դարիդոնն, սև խարպախն: Եւ կայ դեղեր որ պալղամ լուծէ, որպէս թըր. պուլն, և զսալըլհիմարն, և հապիլին, և ճաւշիրն և սեքպինանն, մուղլն, ֆարֆիոնն: Եւ կայ դեղեր որ զըստամոքն յուժովցնէ և յստակէ, և զխլտն հանէ, որպէս թրպուլթն՝ որ ի յաղեցն հանէ, և սեքպինանն որ ի յուկերացն հանէ, և սորընճանն: Եւ որ ի թոքն և ի կրծացն հանէ, որպէս զարիդոնն: Եւ որն ի շղերացն հանէ, որպէս շահմիհանդալն: Եւ որն ի լերդէն հանէ, որպէս մազարիոնն: Եւ որն ի փայծղան հանէ, որպէս ճաւշիրն: Եւ որն ի յղեղն քարլէ, որպէս սապոն, և օստոխօտսոն: Եւ կայ որ զթանձր խլտն կտրէ և նօսր առնէ, յորժամ որ ի կուրծքն և ի թոքն լինի. որպէս ճոտան, և ֆարասիոնն, և ալրասան, և չոր զուֆային, և հաշան, և յուն. սուլին: Եւ կայ որ զնօսր խլտն թանձր առնէ, որպէս զամին, քիթրան և նշան: Եւ ի յայն տեղն որ խլտերն յիրար խառնուած լինի, չէ պատճառ որ մէկ դեղով ստածեն, խառնուած դեղ պիտի, որ զան խլտերն՝ որ ի յանձն դապղեր է յստակէ և հանէ, և զայն դեղերն որ այն զօգուածին պատճառ է խառնէ և տուր: Եւ կայ այլ դեղեր, որ զօգոն յորդորէ, որպէս քարօսին հուշդն և ըռգիանն, և ֆաթրասալիոնն, և որ սոցին նման է: Եւ կան դեղեր որ զկանացիկն որ բռնուել է բանայ, որպէս զցրդու պուտըն, կղբուճուն և մուշկ դրամլէն: Եւ կան դեղեր՝ որ զլուծումն արգիլեն, որպէս զհայկաւն, և տապալիլն, և որ սոցին նման է: Եւ կան այլ դեղեր՝ որ զկանացիկն բռնեն, որպէս քարու. պարն, և զամին, և որ սոցին նման է: Եւ կան այլ դեղեր՝ որ զխլտն խաղեցնեն, որպէս խաշ. խաշին կեղևն և հուշտն: Եւ կան այլ դեղեր՝ որ շուտ անցանին ի Էրին ճանապահէն: Եւ այլ դեղեր որ ի տեղն շուտ հասցեն, որպէս սալիլ. խայն, և տարլիին, և ասարուն և քարօսին հուշտն: Եւ կան այլ դեղեր՝ որ զխլտն պաղեցնեն, և զօգուածն թմրեցնեն. որպէս աֆիոնն, և պազրպանն և լուֆանն: Բայց աֆիոնն հոգի կենդանութեան գէն կու առնէ, և զիր չարու.

թիւնն տանի՝ մուշքն, և յամբարն և կղերմունն: Եւ պազրպանեն՝ հոգի զգաստութեան և զգայու: Թեան զէն կու առնէ, և զիր չարութիւն տանի սալիխան, և անիտոն, մազտաքէն, տարչիւն, օնպուլն, և այս թըտպորմի խառնէ որ զէն չառնէ: Եւ կան այլ դեղեր՝ որ նստատեղին զէն կու առնեն, որպէս սապուն, որ՝ մուղլ խառնել կու պիտի: Եւ կան այլ դեղեր, որ սուր են աղեաց զէն կու առնեն, զայն երբ տան՝ նայ՝ քիթրայ խառնել կու պիտի: Եւ սակամոնին ստամոքին զէն կու առնէ, զայն՝ անիտոնով տուր և պղպղղ, և խէրպուէ խառնէ: Եւ սորընճանն՝ զկերակուր ուզենալն խափանէ, և թէ զինքն զատ ուտեն զմկունքն պնդէ, պարտ է որ յինքն՝ մազտաքէն և դաղձ, և յօտ խառնեն, և ի յայն մկունքն որ պնդեր է՝ մուժ ըտողան օծնէ՝ որ զպնդու: Թիւն տանի Եւ թրպուրթն մէն օգտութիւն չի առներ, և իր բնութիւն այն է որ զգիճութիւն կու քարչէ՝ քայց չի կարէր լուծէր մինչև զանճապիլ չի խառնեն որ իր գիճութենով լուծէ: Այլ և զայս գիտացիր՝ որ զայս դեղորանքո՝ կէսք մի փորձելով զտան, և կէս մի յերազի տեսան և իմացան և ըստուզեցին, և կէս մի կարծեօք իմացան՝ իմաստութեամբ զաստիճանն և զխառնուիլն որ խառնեն զգեղորանքն որ զմէկ մէկի ուժ յաւելցնէ, և կամ զսուր դեղերոյն զահրն պակսեցնէ որ զէն չիառնէ, զի ցաւերն կան որ հակառակ են՝ որ լինի ի տաքութիւնէ և ի չորութիւնէ, զայն պիտի որ հովցնեն զտաքութիւն, և զչորութիւն զիճացնեն, որ հաւասարի տարեւրաց: Կամ լինի ի հովութիւնէ և ի գիճութիւնէ, պիտի որ տաքեցնեն և պնդեն: Թէ հով և չոր է, դեղն տաք և զէն պիտի. թէ տաք և զէն է, հովցնել պիտի, և զգիճութիւն պակսեցնել: Եւ դեղերուն ուժովն այլ այս, դ. մաղձէս է, և դ. տարերարց, և, դ. տարածայէ, և մէկ մէկի հակառակ է: Այսպէս զոր յիշեցի պարտ է գիտել և փորձել զբնութիւն և զպատճառ ցաւոյն իմա՛նալ, և զցաւն հակառակովն բժշկիլ:

(Շարունակելի)

ՏՈՒՌ. ՎԱՆՐԱՄ Բ. ԹՈՐԳԱՍԵՆ



ԼԵԶՈՒԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԼԵԶՈՒ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ



ԱՌԱՋԻՆ ՔԵՐԱԿԱՆՆԵՐ

Մարդիկ կ'ապրին ոչ միայն իրենց այլ և նմանեաց ու յաջորդներու համար, որով հարկ է փոխանցել անոնց՝ մտքի յղացումն: Եւ որ ու գաղափարներ, խօսքի միջոցաւ Գաղափարն արտայայտող խօսքերը՝ հասկանալի լինելու համար, հարկաւոր է զանոնք զաստուրել որոշ կերպով. ահա առաջին գործը հանճարը՝ որ մտածեց դասաւորել խօսքերը. դա արդէն արտահատի ստեղծումն է. իսկ ուրիշներու և յետնորդներու հաղորդելու համար հնարեց զգալի նշաններով գործմել զայնս. այս նախնական փորձերն առաջնորդեցին զրեւու գիտին, որ անհրաժեշտ հետեանք եղաւ խօսքի արտայայտութեան: Ասկայն ժամանակի հուովման հետ լամէն ինչ փոփոխում է և մոռացուում դրա առաջին աննելու համար մտածեցին խօսքի և զրի անհաստատութիւնն, մանաւանդ ասինքն՝ անսահման ազատութիւնն չափաւորել, սահմանաւորել, կարգի և կապի տակ դնել, և այնուհետև կազմուեցաւ լեզուի Գերականութիւնը, որ է արտեստ ուղիղ խօսելու և ուղիղ գրելու: Սա արդարեւ մարդկային գիտելու հրաշալիքն է, զլուս զործոցն, սկիզբն, պատճառ և մայր մաննայի՝ գիտութեանց, արուեստից և մարդկային երջանկութեան:

Այս արուեստին պարապող արուեստաւորներն, հին ժամանակներէ ի վեր կոչուէին Քերականք. և հարկ է խոստովանիլ, հնոց քով մեծ յարգ կը վայելէին Քերականք, որ մեծ ջանքով և ազգասէր նախնաձով վառուած՝ մշակեցին, ազնուացուցին լեզուն և բարգաւառ մատենագրութեամբ ճոխացուցին հայրենի գրականութիւնը:

Ամէն ազգերու մէջ գերազանց գոնուեցան Յոյներն, որոց համար մեր Պատմա-